



ՀԱՎԵՐԺԱՅՄԱՆ ԱՐԺԱՆԻ ՀՈՐԵԼՅԱՆ

Հայոց Հայրապետական Աթոռը հիմնվեց 280 թվին Վաղարշապատում, Արշակունի թագավորների մայրաքաղաքում. քաղաքի հարավային կողմը, համաձայն Գրիգոր Լուսավորչի տեսիլքին, ինչպես ավանդում է Ագաթանգեղոսը. ըստ որում մի լուսեղեն այր երկնքից իջնում է ոսկե մուրճը ձեռին, բաղխում է գետինը, որից ցնցվում է սանդարամետքը. այս հարվածի տեղում երևում է մի բարձր հրեղեն սյուն. Տեսիլքում երևացող հրեշտակի պատվերով այստեղ կառուցվում է Լուսավորչի ձեռքով այն տաճարը, որը կրում է էջմիածին անունը:

Սակայն Հայրապետական Աթոռը միշտ հաստատ շմնաց նույն տեղում. քաղաքական այս պայմաններն ստիպում էին, որ հայոց կաթողիկոսներն ապրեին քաղաքական իշխանության կենտրոնացած վայրերում, լյա՛մ ասպատակող ցեղերից ապահով մի ճանգրվանում: Այսպես, տեսնում ենք, որ Հայրապետական Աթոռը դարերի ընթացքում փոխադրվում է տեղից տեղ՝ Վաղարշապատից Դվին (485-ին), այստեղից Աղձամար (928-ին), ապա Կարմիր վանք և այստեղից Մոզք՝ (1116-ին), այստեղից Հոռմկլայ (1149-ին) և այստեղից վերջպես Կիրիկիո հայոց թագավորանիստ Միսաղաքը (1292-ին), որտեղից վերջին անամ փոխադրվում է դարձյալ Վաղարշապատ (1441-ին) և շարունակում է մնալ ինչև՛ այսօր:

Չնայելով այս հաճախակի տեղափոխություններին, Գրիգոր Լուսավորչի հիմնածայր տաճարը հայ ժողովրդի գիտակցության մեջ հարատևման էր իբրև ազգային մենամարտական սրբավայր: Հոռմկլայի արժապոյի վրա նստած ներսես Շնորհաան օրհներգում էր այս տաճարը ոգեշնչել արականով— «էջ Միածինն ի Շորէ, և լայս առաց ընդ նրմա...», որի առաջին երկու տները կցվելով կազմեցին մի հատուկ աուն՝ էջմիածին, որով այնուհետև պաշտոն-

նապես կոչվում է Լուսավորչակերտ տաճարը և շարականը դառնում է պաշտոնական օրհներգ հայոց Հայրապետական Աթոռին:

Պարսից Մեծ Շահաբասը Ջուղայի հայերին Պարսկաստան գաղթեցնելով, նրանց զանազան արտոնություններ տվեց, որպեսզի գաղթականները բնակվեն նոր հայրենիքում և վաճառականությունը ծաղկեցնեն: Սակայն հայերի սիրտը չէր կաշում նոր հայրենիքին և նրանք խմբերով փախչում, վերադառնում էին Հայաստան: Շահը հայ խոջանների հետ խոսելիս զարմանք հայտնեց, թե ինչո՞ւ հայերը չնայելով իրենց տրված արտոնություններին, գերադասում էին Հայաստանում ապրել: Խոջաները, ինչպես պատում է Առաքել Դավրիժեցին, Շահին պատասխանում են. «Որովհետև ամբողջ հայոց ազգը կապված է էջմիածնի և Լուսավորչի Աջի հետ»: Շահաբասն ասում է. կհրամայեմ, որ էջմիածինը քանդեն, բոլոր քարերը կրեն այստեղ և այն քարերով այստեղ վերաշինեն տաճարը: Խոջաները նկատելով էջմիածնին սպառնացող վտանգը՝ խորհուրդ են տալիս Շահին, թե կարիք չկա բոլոր տաճարը քանդել: Բավական է եթե երկու-երեք քար բերվի այդ տաճարից և նրանց վրա հիմնվի նոր եկեղեցի տեղական քարերից: Ավելացնենք սրանց վրա աշուղական և ժողովրդական գովերբեր էջմիածնին, մերձավոր ու հեռավոր տեղերից անընդհատ կատարվող ուխտագնացությունները, որոնք բոլորը ցույց են տալիս, թե որքան ազգային և նվիրական էր էջմիածնի տաճարը, որը հիմնված էր Լուսավորչից Հայաստանի կենտրոնում, հայ ժողովրդի ծոցում, իբրև ռոսկր յոսկեբաց և մարմին ի մարմնոյ հայ ժողովրդի:

Բոլորովին տարբեր միջավայր էր հանդիսանում Միսքը, ուր փոխադրվեց Հայրապետական Աթոռը Հոռմկլայի կործանումից հետո: Կիրիկիան վաղուց սերտ հարաբե-

րութեան մեջ էր Արևմտյան եվրոպայի հետ, որին սկիզբ դրեց խաչակրաց արշավանքների ժամանակ, երբ խաչակիրները անցնում էին Կիլիկիայով և Ռուբինյան իշխաններն ամեն կերպ աջակցում էին նրանց իբրև քրիստոնյաների, և միևնույն ժամանակ ակնկալելով նրանցից օգնություն շրջապատող մահմեդական իշխանությունների դեմ։ Խաչակիրները արևելքում գրավեցին շատ երկրներ, հիմնեցին ավատական իշխանություններ Արևմտյան եվրոպայի կարգով։ Մյուս կողմից Վենետիկի և Ճենովայի հանրապետությունները սկսեցին առևտրական հարաբերություններ Կիլիկիայի հետ։ Տեղի էին ունենում ամուսնություններ հայ ազնվական տների և օսմար ազգի իշխանական տների միջև, որոնց միջոցով հայ և օսմար իշխանական տները խնամիանում էին իրար։ Իհարկե, այս ամուսնություններն օրհնվում էին կաթոլիկ հոգևորականների ձեռքով։ Ռուբինյան իշխանները ցանկանալով՝ ձեռք բերել Արևմտադրում տիրող արքունիքների հովանավորությունը, ձգտելով թագավորական տիրույթի՝ պարտավոր էին հաճությանը Հռոմի պապերին, որոնք այդ ժամանակ հզորության գագաթնակետին էին հասել, թագավորներ էին նստեցնում, թագավորներ գահադուրկ անում։ Առն ա. թագավորական թագ ստացավ Հռոմի պապի նվիրակի ձեռքից, նա հայտնապես հպատակվել էր Հռոմին։ Արքունիքը, իշխանական տները ձևապես կամ իրապես հակվել էին դեպի կաթոլիկությունը։ Խորապես, պաշտոնյաների տիրույթները, սովորույթները եվրոպացել էին։ Այս ժամանակ ըստեղծվեց կեղծ դաշանց թուղթը, որով հայոց կաթողիկոսն ընդունում էր Հռոմի պապերի գերիշխանությունը, որին Հռոմի պապը ճանաչում էր հայոց կաթողիկոսներին իբրև առաջին հայրապետ բոլոր Արևելքում։ Հայոց Հայրապետական Աթոռը Միսում մի անկալուն խախտում վիճակի մեջ էր։ Մի կողմից նա պետք է հաճեր Կիլիկիան թագավորների և մեծամեծների կամքը, որոնք քաղաքական հաշիվներով պարտավորված էին ենթակվել Հռոմին և մյուս կողմից նա պետք է պաշտպանվեր արևելյան հայ հոգևորականության՝ Սանահեցոց և Հաղպատեցոց հարձակումների դեմ, որոնք ներքին մեղադրում էին նորամուծությունների, լատին հոգևորականության կամքը կատարելու մեջ։ Միայն տարիներովում էր երկու հոսանքների միջև։ Սղան կաթողիկոսներ,

որոնք ընդունեցին պապերի գերիշխանությունը, եղան եկեղեցական ժողովներ, որոնք ընդունեցին դավանաբանական և ծիսական փոփոխություններ ըստ լատինականի։ Կային նաև հայոց եկեղեցու ավանդություններին հավատարիմ կաթողիկոսներ։ Բայց ինչ կարող էին անել նրանք տիրապետող լատինամոլ հոսանքի դեմ։ Այսպիսիները վրա բարդարանքներ բարդելով՝ զահնկեց էին անում ու փոխարինում լատինամետ կաթողիկոսով։

Ուրեմն պետք էր ուրիշ, արժատական միջոցի դիմել — պետք էր լատինացած մթնոլորտից դուրս կորզել հայոց կաթողիկոսին և սրա համար անհրաժեշտ էր Հայրապետական Աթոռը որոհի փոխադրել այնպիսի մի տեղ, որ պապերի ազդեցության շրջանից դուրս է գտնվում, հատկապես դարձյալ էջմիածին, հայ ժողովրդի նվիրական վայրը, Հայոց Հայրապետության ըսկերքնական Աթոռը։ Այս նպատակով Արեւիկի հայ ականավոր վարդապետները մի պատվիրակի միջոցով բավական ժամանակ գաղտնի բանակցություններ վարեցին իրար հետ։ Այս գաղտնի խորհրդակցությանը մասնակցում էին նաև չորս եպիսկոպոս Սսի աթոռից։ Երբ գործնակարգի ծրագիրը մշակվեց՝ ապա այս խորհրդակցությունն առաջնորդը, Հովհաննես Հերմոնեցի, որ Գրիգոր եպիսկոպոսի հաջորդն էր՝ պաշտոնապես շրջաբերական հրավեր ուղարկեց ամեն կողմ, որ 1441 թվի գաղտնի եպիսկոպոսները ու վարդապետները էջմիածին ժողովվեն մի բարի ու կարևոր գործի համար։

Հրավերն արձագանք գտավ, օրովհետև բոլոր սրտացավ մարդիկ պարզ տեսնում էին, թե ինչպիսի ստոր կորստաբեր վիճակի է հասել Սսի կաթողիկոսությունը։

Ժողովը գումարվեց էջմիածնում 1441 թվին, զատից հետո, ժողովին անձամբ մասնակցում էին մոտ երեք կարևոր իրավասուն անձ հոգևորականներից և աշխարհականներից։ Շատերն էլ, որ հնարավորություն չէին ունեցել անձամբ գալ՝ թղթերով հայտնել էին իրենց միաբանությունը ժողովի որոշումներին։

Ժողովը համակամ ու միաբան որոշեց — հայոց Հայրապետական Աթոռը դարձյալ փոխադրել էջմիածին, զահնկեց հայտաբար Սսի Գրիգոր Մուսաբեկյանց կաթողիկոսին (որ չէր համաձայնվել գալ էջմիածնում նստել) և ընտրել նոր կաթողիկոս։

Կաթողիկոս ընտրվեց Կիրակոս Վիրապեցի վարդապետը, առաքինի վարքի տեր, որ անապատական կյանք էր վարում: Նրան նախ երկնությունը տվին վարդապետական գավազան, ապա ձեռնադրեցին եպիսկոպոս և վերջապես կաթողիկոս:

Այս ձեռնադրությունից քիչ առաջ էջմիածին էր հասել Գր. Լուսավորչի Աջը, որ մոտ մի տարի առաջ անհետացել էր Սսից — կերևի գողացված էր վերոհիշյալ չորս եպիսկոպոսների աջակցությամբ և ուղարկված էջմիածին: Աջի ներկայությունը էջմիածնում ավելի մեծ վաճառականություն ու հեղինակություն ընծայեց նորբնտիր կաթողիկոսին, որովհետև Աջը կաթողիկոսաների էմբլեմն էր համարվում:

Այսպիսով Հայոց Հայրապետական Աթոռը 956 տարի զանազան տեղեր թափառելուց հետո նորից եկավ վերհաստատվեց էջմիածնում, որտեղ հաստատուն մնաց ու մնում է արդեն 504 տարի:

Այս փոխադրությունը սակայն նման չէ նախկին փոփոխություններին, որոնք տեղի էին ունենում քաղաքական հանգամանքների դրդմամբ — գտնվելու այնպիսի տեղերում, որտեղ կենտրոնացած էին հայկական իշխանությունները կամ ապահով էին հելուզակների ասպատակություններից: այնինչ այս վերջին փոխադրությունը էջմիածին՝ բղիտում էր ուղղակի կրոնական եկեղեցական պահանջից — ապահովելու համար Հայոց կաթողիկոսների անկախությունը

նր պապերից, Հայոց Հայրապետության ինքնազխրությունն ու ինքնուրույնությունը, հայոց եկեղեցու դավանության և ծեսերի անխախտությունը օտար եկեղեցիների ոտնահարություններից: Հայրապետական Աթոռի այս վերջին փոխադրությունը միակ միջոցը հանդիսացավ նրան փրկելու և նրա հարատև գոյությունը պահպանելու:

Անհրաժեշտ է այս նշանակալից անցքի 500-ամյա հոբելյանը տոնել և հավերժացնել հանդիսավոր և արժանավայել կերպով: Երբ 1941 թվին, չորս տարի առաջ, տաղնապալից ժամանակներում, անկարելի էր այս անել, ապա ոչ մի արդիւք չկա այս ազգային ինքնաճանաչման պարտքը կատարել ներկայումս, երբ յոթնապիսյան վիշապը ջախջախված է գլխովին և մյուս կողմից Հայոց Հայրապետական Աթոռի դրությունը բարձրված և ապահովված է:

Թե ի՞նչ պետք է անել այս փառավոր հոբելյանը արժանապես. հավերժացնելու համար — ես չեմ ուզում ասել, այլ ֆողոնում եմ, որ այդ ասե արև հեղինակավոր Ազգային-եկեղեցական Ժողովը, որ մոտ ժամանակներս գումարվելու է էջմիածնում նոր կաթողիկոսի ընտրության համար: Նրա խոսքը կլինի Ազգային-եկեղեցական Ժողովի որոշում, կդառնա կանոնական օրենք:

ՍՍ. ՄԱԼԽԱՍՅԱՆՑ

27 ապրիլի 1945 թ.
Երևան

